

**2008/952/ ԵՀ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2004/8/ԵՀ հրահանգի II
հավելվածի կիրարկման և կիրառության մանրամասն ուղեցույցները սահմանող՝
Հանձնաժողովի 2008 թվականի նոյեմբերի 19-ի որոշում (ծանուցված՝ թիվ C(2008)
7294 փաստաթղթի համաձայն)**

Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ

Պաշտոնական տեղեկագիր, L 338, 17.12.2008թ. էջ 0055 - 0061

Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2004/8/ԵՀ հրահանգի II հավելվածի կիրարկման և կիրառության մանրամասն ուղեցույցները սահմանող՝ Հանձնաժողովի 2008 թվականի նոյեմբերի 19-ի որոշում (ծանուցված՝ թիվ C(2008) 7294 փաստաթղթի համաձայն)

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

(2008/952/ԵՀ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով էներգիայի ներքին շուկայում օգտակար ջերմային պահանջարկի հիման վրա համակցված արտադրության խթանմանը վերաբերող և 92/42/ԵՏՀ հրահանգը [1] փոփոխող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2004 թվականի փետրվարի 11-ի 2004/8/ԵՀ հրահանգը, և հատկապես դրա II հավելվածի (ե) կետը,

Քանի որ

- 1) 2004/8/ԵՏՀ հրահանգով նախատեսվում է, որ անդամ պետությունները պետք է ստեղծեն երաշխիքների համակարգ՝ բարձր արդյունավետություն ապահովող համակցված արտադրությամբ արտադրվող էլեկտրաէներգիայի ծագման վերաբերյալ,
- 2) այդ էլեկտրաէներգիան պետք է արտադրվի օգտակար ջերմության արտադրության հետ կապված պրոցեսում և հաշվարկվի 2004/8/ԵՀ հրահանգի II հավելվածում սահմանված մեթոդաբանությանը համապատասխան,
- 3) համակցված արտադրությունի ստացվող էլեկտրաէներգիայի քանակի հաշվարկման համար ներդաշնակեցված մեթոդաբանություն ապահովելու նպատակով անհրաժեշտ է

ընդունել 2004/8/ԵՀ հրահանգի II հավելվածում սահմանված ընթացակարգերը և սահմանումները հստակեցնող ուղեցույցեր,

4) ավելին, այդ ուղեցույցերով անդամ պետություններին պետք է հնարավորություն տրվի ամբողջությամբ փոխատեղել 2004/8/ԵՀ հրահանգի առանցքային կարևորություն ունեցող մասերը, որոնք վերաբերում են օրինակ՝ ծագման երաշխիքներին և բարձր արդյունավետություն համակցված արտադրության մասով օժանդակության ծրագրերի ստեղծմանը: Նրանք պետք է շարունակեն իրավական որոշակիություն ապահովել Համայնքում էներգիայի շուկայի համար և այդպիսով վերացնեն խոչընդոտները նոր ներդրումների համար: Նրանք պետք է օգնեն նաև Համայնքի ֆինանսական միջոցների հաշվին համակցված արտադրության գծով պետական օժանդակության և ֆինանսական աջակցության համար դիմումների ուսումնասիրության նպատակով հստակ չափանիշներ սահմանելու հարցում,

5) սույն Որոշմամբ նախատեսված միջոցները համապատասխանում են 2004/8/ԵՀ հրահանգի 14(1) հոդվածով ստեղծված Կոմիտեի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՈՐՈՇՈՒՄԸ.

Հոդված 1

2004/8/ԵՀ հրահանգի II հավելվածում սահմանված ընթացակարգերը և սահմանումները հստակեցնող մանրամասն ուղեցույցները, որոնք անհրաժեշտ են համակցված արտադրությունի ստացվող էլեկտրաէներգիայի քանակի հաշվարկման մեթոդաբանության կիրառության համար, սահմանված են սույն Որոշման հավելվածում:

Ուղեցույցներով ներդաշնակեցված մեթոդաբանություն է սահմանվում այդ էլեկտրաէներգիայի քանակի հաշվարկման համար:

Հոդված 2

Սույն Որոշումը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 2008 թվականի նոյեմբերի 19-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Մարիան Ֆիշեր Բոել

Հանձնաժողովի անդամ

[1] ՊՏ L 52, 21.02.2004թ., էջ 50

**Մանրամասն ուղեցույցներ 2004/8/ԵՀ հրահանգի II հավելվածի կիրարկման և
կիրառության համար**

I. Համակցված արտադրությունից ստացված էլեկտրաէներգիայի հաշվարկը

1. Համակցված արտադրության տեղակայանքը, որը շահագործվում է հենց համակցված արտադրության տեղակայանքից դուրս եկող ջերմության վերաօգտագործման տեխնիկապես հնարավոր առավելագույն ծավալով, համարվում է լրիվ համակցված ռեժիմով շահագործվող: Ջերմությունը պետք է արտադրվի օգտակար ջերմության կոնկրետ պահանջարկի կամ շուկայի համար պահանջվող՝ էներգաօբյեկտում առկա ճնշման և ջերմաստիճանային պայմաններում: Լրիվ համակցված ռեժիմի դեպքում ամբողջ էլեկտրաէներգիան համարվում է ջերմաէներգիայի և էլեկտրաէներգիայի համակցված արտադրության (ՋԷՀԱ) էլեկտրաէներգիա (տես՝ 1-ին պատկերը):

2. Այն դեպքերում, երբ կայանը բնականոն պայմաններում չի գործում լրիվ համակցված ռեժիմով, անհրաժեշտ է որոշել համակցված ռեժիմով չարտադրվող էլեկտրական և ջերմային էներգիան և այն տարանջատել ՋԷՀԱ-ից: Դա պետք է արվի ՋԷՀԱ շրջանակները սահմանող սկզբունքների հիման վրա, որոնք նկարագրվում են II բաժնում: Շատ դեպքերում էներգաօբյեկտի տեխնիկական կայանքների մաս կազմող միայն ջեռուցման կաթսայական տեղակայանքների (առաջնային, երկրորդային կաթսայական ագրեգատներ) էներգիայի ծախսը և արտադրությունը չպետք է հաշվի առնվի, ինչպես ներկայացված է 1-ին պատկերում: «Համակցված արտադրության տեղակայանքի» վանդակի ներսում գտնվող սլաքները ցույց են տալիս համակարգի ներսում էներգիայի հոսքը:

Պատկեր 1

ՋԷՀԱ մասը, ՋԷՀԱ չհանդիսացող մասը և միայն ջեռուցման կաթսայական տեղակայանքները կայանի ներսում

ՋԷՀԱ վառելիք

ՋԷՀԱ մաս

ՋԷՀԱ էլեկտրաէներգիա

Օգտակար ջերմություն (ՋՋԷՀԱ)

Ոչ ՋԷՀԱ վառելիք

Ոչ ՋԷՀԱ մաս

Ոչ ՋԷՀԱ էլեկտրաէներգիա

ջերմություն

Համակցված արտադրության տեղակայանք

Վառելիքով աշխատող կաթսա

Միայն ջեռուցման կաթսայական տեղակայանք

ջերմություն

Կայան

3. Համակցված արտադրության միկրոտեղակայանքների համար հավաստագրված արժեքները պետք է սահմանվեն, հաստատվեն կամ վերահսկվեն յուրաքանչյուր անդամ պետության կողմից նշանակված ազգային մարմնի կամ իրավասու մարմնի կողմից, ինչպես նշված է 2004/8/ԵՀ հրահանգի 5(2) հոդվածում:

4. Համակցված արտադրությունից ստացվող էլեկտրաէներգիան հաշվարկվում է ըստ ստորև նշված քայլերի:

5. Քայլ 1՝

5.1. Համակցված արտադրությունից ստացվող էլեկտրաէներգիա չհամարվող էլեկտրաէներգիայի մասը տարանջատելու համար անհրաժեշտ է հաշվարկել համակցված արտադրության տեղակայանքի ընդհանուր արդյունավետությունը:

5.2. Համակցված արտադրության տեղակայանքի ընդհանուր արդյունավետությունը որոշվում է հետևյալ կերպ՝ ՋԷՀԱ կայանում սահմանված հաշվետու ժամանակահատվածում արտադրված էներգիայի ծավալը (էլեկտրաէներգիա, մեխանիկական էներգիա [1] և օգտակար ջերմություն) պետք է բաժանել համակցված արտադրության տեղակայանքում նույն հաշվետու ժամանակում ծախսված վառելիքի ծավալի վրա, այսինքն՝

Ընդհանուր արդյունավետություն (ՕԳԳ) = (արտադրված էներգիա)/(ծախսված վառելիք)

5.3. Ընդհանուր արդյունավետության հաշվարկը պետք է կատարվի համակցված արտադրության կոնկրետ տեղակայանքի իրական/գրանցված չափված արժեքներից վերցված փաստացի շահագործման տվյալների հիման վրա, որոնք արձանագրվել են հաշվետու ժամանակահատվածում: Արտադրողի կողմից տրամադրված տիպային կամ հավաստագրված արժեքները (ըստ կոնկրետ տեխնոլոգիայի/տեխնիկական կառուցվածքի) չեն կարող օգտագործվել [2]:

5.4. Հաշվետու ժամանակահատված նշանակում է համակցված արտադրության տեղակայանքի շահագործման այն ժամանակահատվածը, որի համար պետք է սահմանվի էլեկտրաէներգիայի քանակությունը: Սովորաբար, հաշվետվությունը կազմվում և ներկայացվում է տարեկան կտրվածքով: Այնուամենայնիվ, թույլատրվում են ավելի կարճ ժամկետներ: Առավելագույն ժամկետը մեկ տարի է, իսկ նվազագույնը՝ մեկ ժամ: Հաշվետու ժամանակահատվածները կարող են տարբերվել չափումների հաճախականությունից:

5.5. Արտադրված էլեկտրաէներգիա նշանակում է ընդհանուր էլեկտրական էներգիան (ՋԷՀԱ և ոչ ՋԷՀԱ) և օգտակար ջերմությունը (ՋՋԷՀԱ), որն արտադրվել է ՋԷՀԱ կայանում հաշվետու ժամանակահատվածում:

5.6. 2004/8/ԵՀ հրահանգի 3(բ) և 3(գ) հոդվածում բերված սահմանումների համաձայն, որպես օգտակար ջերմություն (ՋՋԷՀԱ) կարող է համարվել հետևյալ ջերմությունը՝ ջերմություն, որն օգտագործվում է տեխնոլոգիական տաքացման կամ տարածքի ջեռուցման համար և (կամ) մատակարարվում է հետագա սառեցման նպատակներով. ջերմություն, որը մատակարարվում է կենտրոնացված ջերմամատակարարման/հովացման ցանցեր. համակցված արտադրության պրոցեսում արձակված գազեր, որոնք օգտագործվում են անմիջական տաքացման և չորացման նպատակներով:

5.7. Օգտակար չհանդիսացող ջերմության օրինակները հետևյալն են՝ շրջակա միջավայր հեռացվող ջերմությունը առանց դրա շահավետ օգտագործման [3]. ծխատար կամ արտանետիչ խողովակներից դուրս եկող ջերմային կորուստները /չօգտագործված ջերմությունը սարքավորումներում, ինչպես օրինակ՝ կոնդենսատորներում կամ ջերմահեռացնող տաքացուցիչներում հեռացվող ջերմությունը. ներսում օգտագործվող ջերմություն օդազերծման, կոնդենսատի տաքացման, լրացաջրի և կաթսան սնող ջրի տաքացման համար, որոնք օգտագործվում են համակցված արտադրության տեղակայանքի ներսում կաթսաների, օրինակ՝ ջերմափոխանակիչ կաթսաների շահագործման համար: Համակցված արտադրության կայան վերադարձված խտուցքի ջերմապարունակությունը

(օրինակ՝ կենտրոնացված ջերմամատակարարման համար կամ արտադրական պրոցեսում օգտագործվելուց հետո) չի համարվում օգտակար ջերմություն և կարող է հանվել գոլորշու արտադրության հետ կապված ջերմային հոսքի ծավալից՝ անդամ պետությունում կիրառվող գործելակերպին համապատասխան:

5.8. Էլեկտրաէներգիայի արտադրության համար մեկ այլ էներգաօբյեկտ արտահանված ջերմությունը չի որակվում որպես օգտակար ջերմություն, բայց համարվում է համակցված արտադրության տեղակայանքի ներսում իրականացվող ներքին ջերմափոխանակության մաս: Այս դեպքում, այդ արտահանված ջերմությունից ստացված էլեկտրաէներգիան ներառվում է արտադրված էլեկտրաէներգիայի ընդհանուր ծավալի մեջ (տես՝ 4-րդ պատկերը):

5.9. Ոչ ԶԷՀԱ էլեկտրաէներգիա նշանակում է հաշվետու ժամանակահատվածում համակցված արտադրության տեղակայանքի կողմից արտադրվող էլեկտրաէներգիա այն դեպքերում, երբ առկա է հետևյալ իրավիճակներից որևէ մեկը՝ համակցված արտադրության պրոցեսում հարակից արտադրված ջերմությունը կամ արտադրված ջերմության որևէ մասը չի կարող համարվել օգտակար ջերմություն:

5.10. Ոչ ԶԷՀԱ էլեկտրականության արտադրություն կարող է լինել հետևյալ դեպքերում՝

ա) անբավարար օգտակար ջերմության պահանջարկ ունեցող կամ օգտակար ջերմային էներգիայի արտադրություն չներառող պրոցեսներում (օրինակ՝ անբավարար ջերմությամբ շահագործվող կամ ջերմություն չօգտագործող գազատուրբիններ, ներքին այրման շարժիչներ և վառելիքային տարրեր),

բ) ջերմահեռացման կառուցվածքներում առկա պրոցեսներում (օրինակ՝ գոլորշու ցիկլով էլեկտրակայանների և կարգավորվող շոգեառումով կոնդենսացիոն տուրբիններով՝ համակցված շոգեգազային ցիկլով էլեկտրակայանների կոնդենսացման կառուցվածքներում):

5.11. Ծախսվող (մատակարարվող) վառելիք նշանակում է ցածր ջերմարար ունակության վրա հիմնված վառելիքի էներգիայի ընդհանուր ծավալը (ԶԷՀԱ և ոչ ԶԷՀԱ), որն անհրաժեշտ է հաշվետու ժամանակահատվածում համակցված արտադրության պրոցեսում էլեկտրաէներգիայի և ջերմության (ԶԷՀԱ և ոչ ԶԷՀԱ) ստացման համար: Ծախսվող (օգտագործվող) վառելիք նշանակում է ցանկացած այրվող նյութ, ներմուծված գոլորշի և այլ ջերմակիրներ, ինչպես նաև պրոցեսից ավելացած ջերմություն, որը համակցված արտադրության տեղակայանքում օգտագործվում է էլեկտրաէներգիայի արտադրության

համար [4]: Համակցված արտադրության պրոցեսից (գոլորշու արտադրության դեպքում) վերադարձված խտուցքը չի համարվում ծախսվող (օգտագործվող) վառելիք:

5.12. ԶԷՀԱ վառելիքի էներգիա նշանակում է ցածր ջերմարար ունակության վրա հիմնված վառելիքի էներգիա, որն անհրաժեշտ է համակցված արտադրության պրոցեսում հաշվետու ժամանակահատվածում ԶԷՀԱ էլեկտրաէներգիա և ջերմություն արտադրելու համար (տես՝ 1-ին պատկերը):

5.13. Ոչ ԶԷՀԱ վառելիքի էներգիա նշանակում է ցածր ջերմարար ունակության վրա հիմնված վառելիքի էներգիա, որն անհրաժեշտ է համակցված արտադրության տեղակայանքում հաշվետու ժամանակահատվածում օգտակար ջերմություն չհամարվող ջերմության և (կամ) ոչ ԶԷՀԱ էլեկտրական էներգիայի արտադրության համար (տես՝ 1-ին պատկերը):

6. Քայլ 2՝

6.1. Արտադրված էլեկտրաէներգիայի չափված քանակությունը և արտադրված օգտակար ջերմության չափված քանակությունը կարող են հաշվի առնվել համակցված արտադրության պրոցեսի արդյունավետության որոշման մեթոդաբանության կիրառման ժամանակ, եթե համակցված արտադրության տեղակայանքի ընդհանուր արդյունավետությունը հավասար է կամ մեծ է հետևյալից՝

ա) 80 տոկոս՝ «Համակցված ցիկլով ջերմափոխանակիչ գազատուրբինային կայանքների» և «Կարգավորվող շոգեառումով կոնդենսացիոն տուրբինների վրա հիմնված կայանների» համար և

բ) 75 տոկոս՝ համակցված արտադրության տեղակայանքների այլ տեսակների համար, ինչպես նշված է հրահանգի II հավելվածում:

6.2. Համակցված ռեժիմով փաստացի շահագործվող համակցված արտադրության միկրո տեղակայանքների համար (մինչև 50 էլեկտրական կՎտ) թույլատրվում է հաշվարկված ընդհանուր արդյունավետությունը (համաձայն 1-ին քայլի) համեմատել արտադրողի կողմից տրամադրված հավաստագրված արժեքների հետ այնքանով, որքանով առաջնային

Էներգիայի խնայողության (ԱԷԽ) ցուցանիշը զրոյից բարձր է, ինչպես սահմանված է 2004/8/ԵՀ հրահանգի III հավելվածի (բ) կետով:

7. Քայլ 3՝

7.1. Եթե համակցված արտադրության տեղակայանքի ընդհանուր արդյունավետությունը ցածր է շեմային արժեքներից (75 -80 տոկոս), կարող է իրականացվել ոչ ՋԷՀԱ էլեկտրականության արտադրություն, իսկ տեղակայանքը կարող է բաժանվել երկու վիրտուալ մասերի՝ ՋԷՀԱ և ոչ ՋԷՀԱ:

7.2. ՋԷՀԱ մասի համար, կայանի օպերատորը պետք է ստուգի բեռնվածքի գրաֆիկը (օգտակար ջերմության պահանջարկ) և որոշի, թե արդյոք որոշակի ժամանակահատվածներում է տեղակայանքը շահագործվում է լրիվ համակցված արտադրության ռեժիմով: Եթե այդպես է, ապա կայանի օպերատորը պետք է այդ իրավիճակի և այդ ժամանակահատվածների համար չափի համակցված արտադրության տեղակայանքում արտադրված ջերմային և էլեկտրական էներգիայի փաստացի ծավալը: Այդ տվյալները նրան թույլ կտան որոշել փաստացի «էլեկտրաէներգիայի և ջերմության հարաբերակցության փաստացի մեծությունը» (Հփաստացի) [5]:

7.3. «էլեկտրաէներգիայի և ջերմության հարաբերակցության այս փաստացի մեծությունը» օպերատորին հնարավորություն կտա հաշվարկել, թե հաշվետու ժամանակահատվածի համար չափված էլեկտրաէներգիայի որ մասն է որակավորվում որպես ՋԷՀԱ էլեկտրաէներգիա, ըստ՝ $E_{\text{ՋԷՀԱ}} = Q_{\text{ՋԷՀԱ}} \times \text{Հփաստացի բանաձևի}$:

7.4. Նախագծման փուլում կամ շահագործման առաջին տարում գտնվող համակցված արտադրության տեղակայանքների համար, որոնց դեպքում չափված տվյալները չեն կարող որոշվել, կարող է օգտագործվել լրիվ համակցված ռեժիմում «էլեկտրաէներգիայի և ջերմության հարաբերակցության նախագծային մեծությունը» (Հնախագծային): ՋԷՀԱ էլեկտրաէներգիան հաշվարկվում է ըստ՝ $E_{\text{ՋԷՀԱ}} = Q_{\text{ՋԷՀԱ}} \times \text{Հնախագծային բանաձևի}$:

8. Քայլ 4՝

8.1. Եթե համակցված արտադրության տեղակայանքի «էլեկտրաէներգիայի և ջերմության հարաբերակցության փաստացի մեծությունը» հայտնի չէ, ապա կայանի օպերատորը ՋԷՀԱ

Էլեկտրականության ծավալը հաշվարկելու համար կարող է օգտագործել «Էլեկտրաէներգիայի և ջերմության հարաբերակցության ստանդարտ մեծությունը» (Հստանդարտ), ինչպես նշված է 2004/8/ԵՀ հրահանգի II հավելվածում: ԶԷՀԱ Էլեկտրաէներգիան հաշվարկվում է ըստ՝ $E_{\text{ԶԷՀԱ}} = Q_{\text{ԶԷՀԱ}} \times \text{Հստանդարտ Բանաձևի}$:

8.2. Այդ դեպքում, այնուամենայնիվ, օպերատորը պետք է անդամ պետության կողմից նշանակված՝ հրահանգի 5-րդ հոդվածում նշված ազգային մարմնին կամ իրավասու մարմնին ծանուցի «Էլեկտրաէներգիայի և ջերմության հարաբերակցության փաստացի մեծության» հայտի չլինելու պատճառների մասին, այն ժամանակահատվածի մասին, որի համար բացակայում են տվյալները, և իրավիճակի շտկման համար ձեռնարկված միջոցառումների մասին:

9. Քայլ 5՝

9.1. 3-րդ և 4-րդ քայլերում հաշվարկված էլեկտրաէներգիայի ծավալն այնուհետև հաշվի կառնվի համակցված արտադրության պրոցեսի արդյունավետության որոշման մեթոդաբանության կիրառման, այդ թվում՝ համակցված արտադրության պրոցեսում առաջնային էներգիայի խնայողության (ԱԷԽ) հաշվարկման ժամանակ:

9.2. Առաջնային էներգիայի խնայողության ցուցանիշի հաշվարկման համար անհրաժեշտ է որոշել ոչ ԶԷՀԱ համար սպառվող վառելիքի ծավալը: Ոչ ԶԷՀԱ վառելիքի ծախսը հաշվարկվում է որպես «ոչ ԶԷՀԱ էլեկտրաէներգիայի արտադրության» ծավալի և էլեկտրաէներգիայի արտադրության համար կայանի արդյունավետության հատուկ ցուցանիշի հարաբերություն:

II. Համակցված արտադրության համակարգի սահմանները

1. Համակցված արտադրության համակարգի սահմանները պարփակվում են հենց համակցված արտադրության պրոցեսով: Ծախսվող և արտադրվող ռեսուրսները հաշվարկող չափիչ սարքերը պետք է առկա լինեն մոնիտորինգի համար և պետք է տեղադրվեն այդ սահմանների վրա:

2. Համակցված արտադրության տեղակայանքը էներգետիկ արտադրանք է մատակարարում սպառման գոտի: Սպառման գոտին չի պատկանում համակցված արտադրության տեղակայանքին, բայց սպառում է համակցված արտադրության տեղակայանքի արտադրած էներգետիկ արտադրանքը: Այդ երկու գոտիները պարտադիր չէ, որ լինեն ֆիզիկապես առանձնացված գոտիներ էներգաօբյեկտի ներսում. դրանք ավելի շուտ գոտիներ են, որոնք կարող են ներկայացվել հետևյալ կերպ՝ Սպառման գոտին կարող է լինել արտադրական պրոցես, ջերմային և էլեկտրական էներգիայի անհատական սպառող, կենտրոնացված ջերմամատակարարման/հովացման համակարգ և (կամ) էլեկտրացանց: Բոլոր դեպքերում սպառման գոտում օգտագործվում է համակցված արտադրության տեղակայանքի արտադրած էներգետիկ արտադրանքը (տես՝ 2-րդ պատկերը):

Պատկեր 2

Համակցված արտադրության տեղակայանքի տարածք

Վառելիք ՄՈՒՏՔ

ՋԷՀԱ մաս

Ջերմություն ԵԼՔ

ԾԱԽՍՎԱԾ (ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ) ԷՆԵՐԳԻԱ

Սահման

Էլեկտրաէներգիա ԵԼՔ

ՍՊԱՌՄԱՆ ԳՈՏԻ

3. ՋԷՀԱ էլեկտրականության ծավալը չափվում է գեներատորի արտանցիչների վրա, իսկ համակցված արտադրության տեղակայանքի շահագործման համար օգտագործվող ներքին սպառման էլեկտրաէներգիայի ծավալը չափվում է հանվի: Էլեկտրաէներգիայի արտադրության ծավալից չափվում է հանվի ներքին սպառման համար օգտագործվող էլեկտրաէներգիայի ծավալը:

4. Ջերմային և էլեկտրական էներգիայի արտադրության այլ սարքավորումները, ինչպես օրինակ՝ միայն ջեռուցման կաթսակայան տեղակայանքները և միայն էլեկտրականության էներգաբլոկերը, որոնք ներգրավված չեն համակցված արտադրության պրոցեսում, չեն համարվում համակցված արտադրության տեղակայանքի մաս, ինչպես ներկայացված է 3-րդ պատկերում:

Պատկեր 3

Համակարգի ճիշտ սահմանների ընտրություն օժանդակ/վթարային կաթսայական ագրեգատների համար (ԳՏ՝ գազատուրբին, Գ՝ գեներատոր, ՎԿ՝ վառելիքով աշխատող կաթսա, ՋՕԿ՝ ջերմափոխանակիչ կաթսա)

ՍԽԱԼ | ՃԻՇՏ |

||

5. Օժանդակ շոգետուրբինները (տես՝ 4-րդ պատկերը) պետք է ընդգրկվեն որպես համակցված արտադրության տեղակայանքի մաս: Օժանդակ շոգետուրբինի արտադրած էլեկտրական էներգիան համակցված արտադրության տեղակայանքի արտադրած էներգիայի մասն է կազմում: Էլեկտրական էներգիայի այդ լրացուցիչ ծավալների արտադրության համար անհրաժեշտ ջերմային էներգիան պետք է հանվի համակցված արտադրության տեղակայանքի ընդհանուր առմամբ արտադրած օգտակար ջերմության ծավալից:

Պատկեր 4

Համակարգի ճիշտ սահմանների ընտրություն օժանդակ շոգետուրբինների համար (ՇՏ՝ շոգետուրբին)

ՍԽԱԼ | ՃԻՇՏ |

||

6. Եթե առաջնային շարժասարքերը (այն է՝ էլեկտրաշարժիչը կամ տուրբինը) միացված են հաջորդական շղթայով (որտեղ մեկ առաջնային շարժասարքից ջերմությունը փոխակերպվում է գոլորշու՝ շոգետուրբին մղվելու համար), ապա առաջնային շարժասարքերը չեն կարող դիտարկվել որպես առանձին մասեր, նույնիսկ եթե շոգետուրբինը տեղակայված է մեկ այլ էներգաօբյեկտում:

Պատկեր 5

Համակցված արտադրության տեղակայանքի սահմանները միացված առաջնային շարժասարքերի համար

ՋԷՀԱ կայանի սահմանը

Վառելիք ՄՈՒՏՔ

ԱՌԱՋՆԱՅԻՆ ՇԱՐՇԱՍԱՐՔ (ԳՏ) 1

Ջերմություն ԵԼՔ

Ջերմություն ՄՈՒՏՔ

ԱՌԱՋՆԱՅԻՆ ՇԱՐՇԱՍԱՐՔ (ՇՏ) 2

Ջերմություն ԵԼՔ

Էլեկտրաէներգիա ԵԼՔ

Էլեկտրաէներգիա ԵԼՔ

7. Երբ առաջին առաջնային շարժասարքը չի արտադրում էլեկտրաէներգիա կամ մեխանիկական էներգիա, համակցված արտադրության տեղակայանքի սահմանը պարփակվում է երկրորդ առաջնային շարժասարքի շուրջը: Այս երկրորդ առաջնային շարժասարքի համար օգտագործվող վառելիքը առաջին առաջնային շարժասարքից արտադրվող ջերմությունն է:

[1] Մեխանիկական էներգիան մշակվում է թերմոդինամիկական եղանակով՝ էլեկտրականությանը համարժեք, 1գործակցով:

[2] Բացառությամբ համակցված արտադրության միկրո տեղակայանքներից, տես՝ 2-րդ քայլը (կետ 6.2):

[3] Ներառյալ ջերմային էներգիայի անխուսափելի կորուստները և համակցված արտադրության տեղակայանքի արտադրած՝ «տնտեսապես չհիմնավորված պահանջարկ ունեցող» ջերմությունը:

[4] Ծախսվող (օգտագործվող) վառելիքի ծավալը պետք է չափվի այն համարժեք միավորներով, որոնք կիրառվում են ծախսվող (օգտագործվող) այդ վառելիքի արտադրության համար օգտագործվող հիմնական վառելիքի համար:

[5] Եթե տեղակայանքը չի կարող շահագործվել լրիվ համակցված արտադրության ռեժիմով, ՋԷՀԱ էլեկտրաէներգիայի ծավալի հաշվարկման համար կիրառվող՝ «էլեկտրաէներգիայի և ջերմության հարաբերակցության մեծությանը» կարող է օգտագործվել $\text{ՋԷՀԱ էլեկտրական հզորության հաշվարկման համար հետևյալ կերպ՝ } P_{\text{ՋԷՀԱ}} = Q_{\text{ՋԷՀԱ}} \times \zeta$, որտեղ՝ $P_{\text{ՋԷՀԱ}}$ -ն $\text{ՋԷՀԱ էլեկտրական հզորությունն է, } Q_{\text{ՋԷՀԱ}}$ -ն՝ $\text{ՋԷՀԱ ջերմային հզորությունը, իսկ } \zeta$ -ն՝ էլեկտրաէներգիայի և ջերմության հարաբերակցությունը: